ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

**ՔԱՂ. Հ. ԴԱՎԹՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 11 ՀՈԴՎԱԾԻ՝ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ (ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ՝ 3, 5 (2-ՐԴ ՄԱՍ), 6 (1-2-ՐԴ ՄԱՍԵՐ), 26 (1-ԻՆ ՄԱՍ), 27 (1-ԻՆ ՄԱՍ), 37, 42 (1-2-ՐԴ ՄԱՍԵՐ) ՀՈԴՎԱԾՆԵՐԻՆ) ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

/Քննության է ընդունվել ՍԴ թիվ 1 դատական կազմի 25.08.2006թ. թիվ 1-6 որոշմամբ/

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ.**

1. Հաշվի առնելով, որ «Քաղ. Մ. Քոչարյանի դիմումի հիման վրա՝ «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 5 (2-րդ մաս), 6 (1-ին, 2-րդ մասեր), 26 (1-ին մաս), 27 (1-ին մաս), 37, 42 (1-ին, 2-րդ մասեր) հոդվածներին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» և «Քաղ. Հ. Դավթյանի դիմումի հիման վրա՝ «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը (մասնավորապես՝ 3, 5 (2-րդ մաս), 6 (1-2-րդ մասեր), 26 (1-ին մաս), 27 (1-ին մաս), 37, 42 (1-2-րդ մասեր) հոդվածներին) համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործերը վերաբերում են նույն հարցին, ուստի, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39 հոդվածի՝ նշված գործերը միավորել և քննել դատարանի նույն նիստում։

2. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածի 5-րդ մասի՝ գործի դատաքննությունն սկսել 2006թ. սեպտեմբերի 12-ին։

3. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածի 5-րդ մասի՝ գործով զեկուցող նշանակել սահմանադրական դատարանի անդամ Ռ. Պապայանին։

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 6-րդ մասի հիման վրա գործի քննությունն անցկացնել բանավոր ընթացակարգով։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

29 օգոստոսի 2006 թվականի
ՍԴԱՈ-48